

### ՄԱՍ 3. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է Ծառայության մարզային գործակալությունների մեթոդաբանական կարողությունների ամրապնդման գործընթացը: Տարածքային վիճակագրության վարման արդյունավետության բարձրացման, վիճակագրության վարման միջազգային չափանիշներին իրազեկ լինելու նպատակով, մարզային գործակալությունների համար կազմակերպվել են սեմինարներ և խորհրդակցություններ:

Եվրամիության «Թայքս» գործիքի ներքո Ծառայությունն Եվրամիության «Վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգիչ (NUTS) հիմնելու վերաբերյալ» կանոնակարգի (Regulation (EC) NO 1059/2003 of the European Parliament and of the Council of 26 May 2003 “On the establishment of a common classification of territorial units for statistics (NUTS)”) հիմնական մեթոդական երաշխավորություններին ու սկզբունքներին համապատասխան և Դանիայի վիճակագրական ծառայության մեթոդական օժանդակությամբ մշակել է «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի դասակարգիչ»-ը:

Դասակարգիչը հաստատվել է Խորհրդի 2010 թվականի հունվարի 25-ի թիվ 01-Ն որոշմամբ ու հրապարակվել ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում (թիվ 7(359), 15.03.2010 թվական) և տեղադրվել է նաև Ծառայության պաշտոնական կայքէջում՝ «Դասակարգիչներ և մեթոդաբանություն» մասում:

Շարունակվում են Հայաստանի Հանրապետության մարզերի կտրվածքով վիճակագրական ցուցանիշների բազայի ձևավորման աշխատանքները:

Ծառայության ինտերնետային կայքէջի «Տարածքային վիճակագրություն» բաժնի «Հայաստան» ենթաբաժնում քարտեզային և աղյուսակային պատկերմամբ զետեղվել են Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 2005-2011 թվականների վերաբերյալ եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) վիճակագրական ամփոփ տեղեկատվությունը, իսկ «Հրապարակումներ» ենթաբաժնում՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը և քաղաք Երևանը թվերով, 2010», «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2011», «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2012» երկլեզու (հայերեն և անգլերեն) վիճակագրական ժողովածուները, «Ատլաս» Հայաստանի Հանրապետությունը մարզերով, 2007, 2008, 2009» եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) վիճակագրական էլեկտրոնային հրապարակումները (որոնցում առաջին անգամ ՀՀ տարածքային վիճակագրության հիմնական ցուցանիշները հրապարակվել են նաև ըստ «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի դասակարգիչ» ձևաչափի), ինչպես նաև 11 նոր հրապարակումներ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի վերաբերյալ: